

որ տեղի կ'ունենայ ի Լոնտրա (1850 Նոյ. 10)՝ «Վենետկոյ Օրաթերթ»ը (Գեկտ. 5) կը հրատարակէ Անգղոյ իր թղթակցէն ստացած հետեւեալ տեղեկութիւնը՝ որ այս է.

INGHILTERRA

Londra 27, Novembre (1850)

Il Sigr. Raphael, membro del Parlamento nel Comune di S. Albano, morì in questi giorni nell'età di 75 anni. Cattolico, ricco e protettore generoso dei suoi correligionarii, fece costruire a sue spese sette chiese, le quali gli costarono circa mezzo milione di lire sterline. Anche la piccola città di Sarbiton è stata fondata dal medesimo. — G. di M. — (Անդ): (Թարգմանութիւնն է). «Պ. Ռաֆայէլ որ Անգամ էր Անգղ. Խորհրդարանին մէջ Ս. Ապանոյ Նահանգին՝ վախճանեցաւ այս օրերուս իր 75 տարեկան հասակին: Ինքը հարուստ կաթողիկէ մ'էր, միանգամայն աւատածեռն պաշտպան իր հաւատակիցներուն: Իր դրամով կանգնել տուաւ 7 եկեղեցիներ, որոնք կէս միլիոն ստերլին արժեցին: Իր կողմանէ հիմնուած է նաեւ Սուրպիդոն փոքրիկ քաղաքը »:

Բարերարին մահուան բոթին ազդեցութեան տակ Հ. Յարութիւն Ազգերեանն ալ ձեռք կ'առնէ իր գրիչը՝ հետեւեալը գնելու համար իր Ինքնակենսագրութեան « Յաւելուած »ին մէջ. « Ի 25 Նոյեմբերի ամսոյ լուեալ գմահ Պարոն Աղեքսանդրի Ռաֆայէլեան ի Լոնտոն ի 17 ամսոյս ի հասակի 75 ամաց, առ ի յիշատակէ յետնոց համառօտեաց (= այսինքն Հ. Յարութիւն) ի գիր զանցս Միաբանութեանս ընդ Մուրատեան տոհմիցն ի սակս դպրատանց նոցա »:

4. Այս թուականիս կ'ընտրուի Ս. Ղազարու Վարժարանի կղերիկոսաց Վերակացու:

5. 1851-ին Հ. Ալիշան Լոնտրա կը զրկուի՝ բերելու համար դրամը «ի գին Զենոբեայ պատան» («Օրագր. Մ. Ռ. Վրժրն.ի»):

6. Միանգամայն վարիչ կը նշանակուի երիցագոյն աշակերտաց. (Ժող. Արձ.):

7. Այն է՝ մինչեւ իր մեկնումն ի Փարիզ՝ Հ. Ռաֆայէլ Թրեանցի հիւանդութեան պատճառաւ:

8. Ճիշդ սոյն օրէն կ'որոշուի «տալ Վ. Հ. Հմայեկայ զանուն տեսչի Մուրատեան Վարժարանի» (Ժող. Արձ.):

9. Հ. Հմայեակի պաշտօնը վերջացած դրինք այս թուականիս, ինչպէս շատ հաւանական կը թուի, վասն զի Հ. Մանուէլ Քաջունի Պոլսէն կը գրէ այսպէս. « Հասին մանկունքն եկեալք ի Ռաֆայէլեան Վարժարանէն. ընդ նոսին և Վ. Հ. Հմայեակ. ցաւիմ յոյժ ընդ տկարութիւն աչաց նորա. այլ իցէ՛ թէ օգթ հայրենեաց և անդբաղ կեանք կազդուրեսցեն զնա և ապաքինեսցեն ». (գր. առ Հիւրմ. Աբբ. 1859 Սեպտեմբեր 3): Սեպտ. 17-ին արգէն Տրապիզոն կը մեկնի. (Նմկ. Հ. Մ. ի Քաջունեոյ առ Հիւրմ. Աբբ. 1859 Սեպտեմբեր 24):

10. «Վասն եռամսեայ ժամանակի ի դաստիարակութիւն կրտսերագոյն մանկուոյն ». (Ժող. Արձ.):

11. Այս թուականիս իրեն և Հ. Սուքիաս Պարոնեանի համար նշանակուած է՝ «ի սատարութիւն վաստակողացն ի նմա». (Ժող. Արձ.):

12. Հիւանդութեանը պատճառաւ կը դադրի պաշտօնէն: